Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 24

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2007թ. նոյեմբերի 27-ին ժամը 18:00-ին
կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Վահրամ Ներսիսյանցը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ, ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Անդրանիկ Մանուկյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Արայիկ Հովհաննիսյանը	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Կարեն Նազարյանը	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղանի գործադիր տնօրեն
Վանիկ Սողոմոնյանը	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ-ի նախագահ
Աշոտ Ոսկանյանը	«Ագրոզարգացում» ՀԿ-ի նախագահ
Հրաչյա Ջավադյանը	Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամի գործադիր տնօրեն

Նիստից բացակայում էին.

Հովիկ Աբրահամյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ

Նիստին հրավիրված էին.

Դավիթ Ավետիսյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Ալեքս Ռասինը	Կառավարման Խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
Նազելի Վարդանյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ
Հակոբ Պետրոսյանը	«Հազարմայակի մարտարավեր» հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ի գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար
Մինա Սիմհայը	«Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի իրավախորհրդատու
Գայանե Հարությունյանը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի գործերի կառավարիչ
Լևոն Մարտիրոսյանը	ՀՀ վարչապետի օգնական
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Նախքան նիստի օրակարգին անդրադառնալը «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը շնորհավորեց կառավարման խորհրդի նորընտիր անդամներին՝ հույս հայտնելով, որ վերջիններիս մասնակցությունը իրականացվող աշխատանքներին նոր շունչ կհաղորդի:

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը ներկայացրեց կառավարման խորհրդի նոր անդամներ Արայիկ Հովհաննիսյանին, Աշոտ Ոսկանյանին, Հրաչյա Ջավադյանին և բնապահպանական դիտորդ Կարինե Դանիելյանին՝ միաժամանակ նշելով, որ կառավարման խորհրդի անդամներից երկուսն արդեն երկրորդ տարին է, որ հանդես են գալիս որպես կառավարման խորհրդի անդամ:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. «Ոռոգման վեց ինքնահոս համակարգերի նախագծում և շինարարության վերահսկում» IA-06/004 պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:
2. «Արարատի մարզում տեղակայված Աբովյան, Արևշատ, Լանջազատ և Արմավիրի մարզում Գրիբոյեդով համայնքի երրորդ կարգի ջրանցքների վերականգնում» IA/CB/CW-07/001 միջազգային շինարարական մրցույթի մրցութային առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:
3. «Ոռոգման ութ ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» մրցույթի մրցութային առաջարկների համակցված տեխնիկական և ֆինանսական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:
4. «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդման» նպատակով խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթի տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:
5. «68 պոմպակայանների վերականգնման և արդյունավետության բարձրացման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություն» պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:
6. Ջրից դեպի շուկա բաղադրիչի վարկային գործունեության շրջանակներում «Ծրագրի վարչական քաղաքականությունը և ընթացակարգերը» ուղեցույցի քննարկում և հաստատում:
7. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի գնումների պլանի փոփոխության քննարկում և հաստատում:
8. Այլ հարցեր.

   ա/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի «Ֆինանսական գործակալի» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքների քննարկում և հաստատում,

   բ/ տեղեկատվություն՝ Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի ֆինանսական ապահովման վերաբերյալ,

   գ/ տեղեկատվություն՝ Մրցույթների վիճարկման հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու մասին:

Օրակարգի հաստատեց միաձայն:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Ոռոգման վեց ինքնահոս համակարգերի նախագծում և շինարարության վերահսկում» IA-06/004 պայմանագրի նախագիծը:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Արարատի մարզում տեղակայված Աբովյան, Արևշատ, Լանջազատ և Արմավիրի մարզում Գրիբոյեդով համայնքի

երրորդ կարգի ջրանցքների վերականգնում» IA/CB/CW-07/001 միջազգային շինարարական մրցույթի մրցութային առաջարկների գնահատման արդյունքները:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ հարցադրում կատարեց ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ Սիմոն Ղոնաղչյանը, թե արդյոք հաղթող ճանաչված ընկերությունները, որոնք հանդես են գալիս որպես ՀՁ ունեն համապատասխան կազմակերպաիրավական կարգավիճակ: «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ ընկերությունները չեն կազմավորվել որպես ՀՁ, սակայն հետագայում նրանք համատեղ հանդես կգան պայմանագրում որպես խորհրդատու և նրանցից յուրաքանչյուրը կստորագրի պայմանագիրը: Պարզաբանումից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Ոռոգման ուք ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» մրցույթի մրցութային առաջարկների համակցված տեխնիկական և ֆինանսական առաջարկների գնահատման արդյունքները:

Օրակարգի 4-րդ հարցի քննարկումից առաջ, շահերի բախումից խուսափելու նպատակով, կառավարման խորհրդի անդամ Հ. Ջավադյանը դուրս եկավ նիստերի դահլիճից: Վերջինիս բացակայությամբ **<u>միաձայն</u>** /9 կողմ, դեմ/ձեռնպահ չկար/ **որոշվեց՝** հաստատել «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդման» նպատակով խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթի տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «68 պոմպակայանների վերականգնման և արդյունավետության բարձրացման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություն» պայմանագրի նախագիծը:

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ հարցադրում կատարեց ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը: Վերջինս նշեց, որ համաձայն Համաձայնագրի Հայաստանի Հանրապետությունը ԱՄՆ-ի կառավարությունից, ի դեմս Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիայի ստացել է 235,650,000 ԱՄՆ դոլար դրամաշնորհ: Այդ գումարից ներմայումս 8,5 մլն ԱՄՆ դոլարը տրամադրվելու է որպես վարկ՝ գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման համար: Համաձայն ուղեցույցի նախատեսվում է, որ այդ գումարները 7 տարի հետո պետք է վերադարձվեն: Նախարարն անհանգստություն հայտնեց այն հարցի կապակցությամբ, որ եթե այդ գումարները վերադարձվեն ՀՄԿ-ին, ապա, ըստ էության Հայաստանի Հանրապետությանը տրամադրված դրամաշնորհը կնվազի համապատասխանաբար 8,5 մլն ԱՄՆ դոլարի չափով: Վերջինս առաջարկեց դիմել ՀՄԿ-ին՝ գումարների հետստացումից հետո այդ միջոցները ևս ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը ուղղելու խնդրանքով: ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովեփյանը հայտնեց, որ ծրագրի ավարտից հետո նախատեսվում է ստեղծել գործակալ՝ այդ գումարների տնօրինումն իրականացնելու համար:

Կառավարման Խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն Ալեքս Ռասինը պարզաբանեց, որ այդ միջոցները անգամ ծրագրի ավարտից հետո կշարունակեն մնալ, որպես ՀՀ-ին տրամադրված դրամաշնորհային միջոցներ:

Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը առաջարկեց յուրաքանչյուր անհատական վարկավորման պայմանագրում ավելի հստակ ձևակերպել այս դրույթը:

Պարզաբանումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել Ջրից դեպի շուկա բաղադրիչի վարկային գործունեության շրջանակներում «Ծրագրի վարչական քաղաքականությունը և ընթացակարգերը» ուղեցույցը:

Օրակարգի 7-րդ հարցի քննարկման ընթացքում հարց բարձրացվեց ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանի կողմից: Պարոն Մանուկյանը նշեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաջորդ տարում նախատեսվում է ծրագրի շրջանակներում իրականացնել մեծ ծավալներով ճանապարհների շինարարություն, իսկ ձմռանը բիտումի գները շատ ավելի մատչելի են, ուստի ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին առաջարկեց կանխավճար տրամադրել շինարարություն իրականացնող ընկերություններին՝ նախապես բիտում ձեռք բերելու համար:
Արա Հովսեփյանը հայտնեց, որ հարցն իհարկե կարող է քննարկվել ՀՄԿ-ի հետ, սակայն բիտումը նախապես կարող է ձեռք բերվել բացառապես համաձայն կիրառվող ընթացակարգերի, այն է միջազգային մրցակցային ընտրության հիման վրա, որը կտևի մոտ 4-5 ամիս:

Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը մշեց, որ չնայած ՀՀ պետական բյուջեի շրջանակներում վերականգնման ենթակա ճանապարհների շինարարության համար բիտումը ձեռք է բերվում նախապես, այնուամենայնիվ, հաշվի առնելով ծրագրի առանձնահատկությունները, այդ մոտեցումը տվյալ պարագայում արդարացված չէ:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի գնումների պլանի փոփոխությունները:

Օրակարգի 8-րդ կետի
ա/ ենթակետի վերաբերյալ միաձայն որոշվեց հաստատել «Ֆինանսական գործակալի» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքները:

բ/ ենթակետի վերաբերյալ Արա Հովսեփյանը կառավարման խորհրդի անդամներին ներկայացրեց տեղեկատվություն գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի ֆինանսական ապահովման վերաբերյալ: Տեղեկատվության ներկայացումից հետո ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը նշեց, որ փաստորեն արտարժույթի արժեզրկման արդյունքում ծրագրով նախատեսված վերականգնման ենթակա ճանապարհների ծավալները էապես նվազում են: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը դիմեց Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն Ալեքս Ռասինին՝ պարզաբանելու համար, թե հնարավոր է արդյոք դիմել ՀՄԿ-ին, հաշվի առնելով ԱՄՆ դոլարի արժեզրկումը, հավելյալ գումարներ տրամադրելու խնդրանքով, որպեսզի ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումներն իրականացվեն: Պարոն Ռասինը պարզաբանեց, որ ներկայումս գործող Համաձայնագրի շրջանակներում հավելյալ գումարների ստացման հնարավորություն նախատեսված չէ, սակայն հետագայում նոր Համաձայնագրերի կնքման պարագայում նման դրույթի նախատեսումը հնարավոր կլինի:

Կառավարման խորհրդի անդամ Կարեն Նազարյանը առաջարկեց ուղղում մտցնել ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկում, մասնավորապես ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի էլեկտրոնային կայքում, որտեղ ներկայացված լայն միջոցառումների շրջանակից մի զգալի մաս բաց է մնալու, օրինակ Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղը:
ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ չնայած այն հանգամանքին, որ ծրագրով նախատեսված ճանապարհների մի մասը դուրս է մնալու իրականացման ծրագրից, բայց այնուամենայնիվ ՊՈԱԿ-ը ձեռնամուխ է եղել այդ ճանապարհների հաշվարկների կատարմանը և նախագծերի մշակմանը:

Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը նշեց, որ անհրաժեշտ է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հետ համատեղ որոշում ընդունել, թե ծրագրով

վերականգնման ենթակա ճանապարհներից, որոնք չեն իրագործվի տվյալ ծրագրի շրջանակներում:

Ներկայացված տեղեկատվությունն ընդունվեց ի գիտություն:

գ/ ենթակետի վերաբերյալ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը կառավարման խորհրդի անդամներին նաև տեղեկացրեց Մրցույթների վիճարկման հանձնաժողովի կազմում կատարված փոփոխության մասին, որը ընդունվեց ի գիտություն:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյան